



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. փետրվարին /վերլուծություն/

2012թ. փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 14384 գործարքներ, որոնց քանակը 2012թ. հունվարի համեմատ աճել է 47.6%-ով, իսկ 2011թ. փետրվարի համեմատ նվազել՝ 3.0%-ով:

2012թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3015 օտարման գործարքների 78.2%-ը կազմել են առուվաճառքները, 21.1%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 39.2%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2012թ. փետրվարին, 2012թ. հունվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 20.1%-ով, իսկ 2011թ. փետրվարի համեմատ՝ 14.8%-ով:

2012թ. փետրվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 69.4%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. փետրվարին, 2012թ. հունվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 12.3%-ով, իսկ 2011թ. փետրվարի համեմատ՝ 14.1%-ով:

2012թ. փետրվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	փետրվար 2011թ.	փետրվար 2012թ.	հունվար 2012թ.
Կենտրոն	442800	400000	400790
Արաբկիր	356100	334000	335300
Քանաքեռ-Զեյթուն	275200	260100	260800
Նոր-Նորք	228100	225000	226908
Ավան	231000	234000	236248
Էրեբունի	236300	233400	234930
Ծննդավիթ	237300	229100	230464
Դավթաշեն	261400	254600	255952
Աջափնյակ	222200	221000	221586
Մայրաթիա-Սնբաստիա	221000	219800	220700
Նուբարաշեն	149000	140100	140100
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-մարաշից/</b>	<b>260000</b>	<b>250100</b>	<b>251250</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. փետրվարին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. հունվարի համեմատ, նվազել են 0.5%-ով:

2012թ. փետրվարին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 328 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. հունվարի համեմատ աճել է 0.9%-ով իսկ 2011թ. փետրվարի համեմատ նվազել է 0.9%-ով:

2012թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		փետրվար 2011թ.	փետրվար 2012թ.	հունվար 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	134100	108000	107246
	Ապարան	46000	48000	50451
	Թալին	57500	60800	62906
Արարատ	Արտաշատ	93300	90000	91600
	Մասիս	131600	105000	107742
	Վեդի	94000	95000	100138
Արմավիր	Արարատ	84600	70000	71682
	Վաղարշապատ	150800	150000	144109
	Արմավիր	124800	114700	114700
	Մեծամոր	83600	85000	85706

Գնդարքունիք	Սևան	91000	96000	97219
	Գավառ	47700	51000	55986
	Մարտունի	86500	105100	106493
	Վարդենիս	31400	32000	34005
	Ճամբարակ	20600	21000	22914
Լոռի	Վանաձոր	89200	82500	82335
	Ստեփանավան	59800	76000	80115
	Սպիտակ	83800	100000	103267
	Ալավերդի	33600	49000	51183
	Տաշիր	37000	40000	45787
	Թումանյան	6200	11000	12500
	Շամլուղ	3400	8000	8300
	Ախթալա	14400	19500	19700
Կոտայք	Աբովյան	145700	150000	144900
	Նոր Հաճն	130100	127900	127926
	Բյուրեղավան	105100	106800	106966
	Եղվարդ	109700	108000	108963
	Հրազդան	61200	57538	57538
	Ծաղկաձոր	177000	295000	300827
	Չարենցավան	76300	82500	82401
Շիրակ	Գյումրի	113500	101000	99550
	Արթիկ	63100	64100	62982
	Մարալիկ	30200	35600	35782
Սյունիք	Գորիս	139000	115000	116339
	Կապան	101500	88000	88903
	Սիսիան	84300	78100	79784
	Մեղրի	62000	68500	68500
	Ագարակ	34500	39700	39700
	Քաջարան	60400	100000	106302
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	72000	82000	81501
	Եղեգնաձոր	110900	120000	128532
	Զերմուկ	121000	92000	84989
Տավուշ	Դիլիջան	105700	100000	91831
	Իջևան	131500	110000	112558
	Բերդ	42300	49500	49700
	Նոյնմբերյան	34400	40200	40200
	Այրում	24200	24500	24684

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բազառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. հունվարի համեմատ, նվազել են 1.1%-ով:

2012թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 332 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 79, մարզերում միասին վերցրած՝ 253: 2012թ. փետրվարին, 2012թ. հունվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 21.0%-ով, ընդ որում Երևանում՝ 22.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 20.4%-ով: 2011թ. փետրվարի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 1.2%-ով, ընդ որում Երևանում՝ 6.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 0.4%-ով:

2012թ. փետրվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	փետրվար 2011թ.	փետրվար 2012թ.	հունվար 2012թ.
Կենտրոն	468800	459000	459800
Արաբկիր	378000	365000	370100
Քանաքեռ Զեյթուն	288900	274700	275000
Նորք Մարաշ	275500	301050	302000
Ավան	243000	249000	249100
Էրեբունի	244000	219500	219800
Շենգավիթ	249200	239300	239500
Դավթաշեն	274000	257500	258000
Աջափնյակ	239000	236300	236800
Մայրթիա Սեբաստիա	233600	220000	220500
Նուբարաշեն	150800	144800	144800
<b>Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)</b>	<b>276800</b>	<b>269700</b>	<b>270500</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. փետրվարին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. հունվարի համեմատ նվազել են են 0.3%:

2012թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		փետրվար 2011թ.	փետրվար 2012թ.	հունվար 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	142600	130050	130000
	Ապարան	48700	52100	53000
	Թալին	57700	70000	71550
Արարատ	Արտաշատ	99500	100000	102600
	Մասիս	137500	112000	113950
	Վեդի	98300	99850	100200
	Արարատ	89100	88000	89100
Արմավիր	Վաղարշապատ	164300	145100	146400
	Արմավիր	131800	100000	100900
Գեղարքունիք	Սևան	96200	90900	93500
	Գավառ	50500	45500	46100
	Մարտունի	88800	90100	90850
	Վարդենիս	34000	34000	35000
	Ճամբարակ	23000	26000	26100
Լոռի	Վանաձոր	98000	95050	96000
	Ստեփանավան	63350	87000	87100
	Սպիտակ	86500	111300	111500
	Ալավերդի	36400	42150	42150
	Տաշիր	40300	51050	52000
	Թումանյան	10800	12500	13000
	Շամլուղ	7500	13200	13200
	Ախթալա	18300	29400	29400
Կոտայք	Աբովյան	159200	143500	143700
	Նոր Հաճն	136500	128100	129000
	Բյուրեղավան	109400	120000	120100

	Եղվարդ	113700	115000	115600
	Հրազդան	65400	77000	77000
	Ծաղկաձոր	317400	303700	303800
	Չարենցավան	79500	74500	75000
Շիրակ	Գյումրի	122600	115800	116500
	Արթիկ	63900	60000	60100
	Մարալիկ	32200	48000	48000
Սյունիք	Գորիս	143200	126900	127000
	Կապան	107600	97800	98000
	Սիսիան	86750	87800	88000
	Մեղրի	64150	74500	75000
	Ազարակ	35700	46000	46100
	Դաստակերտ	10500	11600	11600
Վայոց Ձոր	Վայք	75000	82100	83000
	Եղեգնաձոր	113000	109850	110300
	Ջերմուկ	122800	118700	119000
Տավուշ	Դիլիջան	110600	103100	103200
	Իջևան	135600	119900	120000
	Բերդ	43950	57850	58000
	Նոյնմբերյան	35850	46000	46400
	Այրում	26100	34500	34800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. հունվարի համեմատ, նվազել են 0.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. փետրվարին հանրապետությունում օտարվել են 977 միավոր /520.0 հա/ հողեր, որից Երևանում՝ 96 միավոր /10.01 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 495 միավոր /459.61 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.74 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 381 միավոր /40.55 հա/, որից Երևանում՝ 74 միավոր /6.26 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 80 միավոր /5.46 հա/, որից Երևանում՝ 16 միավոր /2.65 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 21 միավոր /14.38 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /6.07 հա/:

2012թ. փետրվարին հանրապետությունում օտարված հողերից 846 միավորի /474.92 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 88 միավոր /8.88 հա/, նվիրատվության գործարքներ՝ 123 միավորի /43.68 հա/, որից Երևանում՝ 8 միավոր /1.12 հա/ և փոխանակության գործարքներ՝ 8 միավորի /1.40 հա/:

Հանրապետությունում 2012թ. փետրվարին, 2011թ. փետրվարի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 23.7%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 28.4%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 16.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 1.9 անգամ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 117.06 հա, որից 104.57 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 16.3%-ը կամ 138 գործարքներ /50.45 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 19 գործարք /0.95 հա/, իսկ 82.6%-ը կամ 699 միավոր /424.44 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 66 միավոր /7.92 հա/: 2012թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 9 գործարք /0.03 հա/:

Ստորև ներկայացվում է 2012թ. փետրվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն կառուցապատման իրավունքի վաճառքները.

	<b>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</b>								<b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	0	0.00	0	0.00	19	0.95	0	0.00	3	0.74	3	0.36	48	5.12	12	1.71
Արագածոտն	5	4.62	1	0.21	0	0.00	3	0.15	45	102.21	0	0.00	12	1.23	1	0.17
Արարատ	10	9.08	0	0.00	3	0.51	2	0.01	69	53.48	2	0.82	33	3.30	2	0.01
Արմավիր	1	0.41	0	0.00	0	0.00	1	0.01	86	104.16	2	6.53	48	5.95	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	1	0.12	1	0.01	15	16.15	0	0.00	34	4.96	4	0.33
Լոռի	2	0.84	0	0.00	1	0.002	0	0.00	69	34.66	1	1.50	18	2.24	4	0.14
Կոտայք	12	15.64	1	0.11	38	3.11	2	0.15	47	28.56	8	4.74	43	3.43	11	0.47
Շիրակ	0	0.00	1	0.03	7	0.09	8	0.34	28	23.77	1	0.02	12	2.16	3	0.49
Սյունիք	0	0.00	0	0.00	3	2.17	0	0.00	4	5.95	1	0.05	1	0.07	1	0.01
Վայոց Ձոր	2	10.00	0	0.00	1	0.04	4	0.15	6	2.22	0	0.00	1	0.11	0	0.00
Տավուշ	2	1.40	0	0.00	3	0.21	4	0.08	10	5.95	0	0.00	8	0.63	3	0.06
Ընդամենը	34	41.99	3	0.35	76	7.20	25	0.90	382	377.85	18	14.02	258	29.20	41	3.39

Ստորև ներկայացվում է 2012թ. փետրվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ նպատակային նշանակության.

	<b>Ուղղակի վաճառք</b>								<b>Աճուրդ վաճառք</b>									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	19	0.95	0	0.00	0	0.00	19	0.95	0	0.00
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	9	4.98	5	4.62	1	0.21	0	0.00	3	0.15
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	15	9.60	10	9.08	0	0.00	3	0.51	2	0.01
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.42	1	0.41	0	0.00	0	0.00	1	0.01
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.13	0	0.00	0	0.00	1	0.12	1	0.01
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	3	0.84	2	0.84	0	0.00	1	0.002	0	0.00
Կոտայք	6	0.45	0	0.00	4	0.30	2	0.15	47	18.56	12	15.64	1	0.11	34	2.81	0	0.00
Շիրակ	8	0.12	1	0.03	5	0.08	2	0.01	8	0.34	0	0.00	0	0.00	2	0.01	6	0.33
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	3	2.17	0	0.00	0	0.00	3	2.17	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	7	10.19	2	10.00	0	0.00	1	0.04	4	0.15
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	9	1.69	2	1.40	0	0.00	3	0.21	4	0.08
<b>Ընդամենը</b>	<b>14</b>	<b>0.57</b>	<b>1</b>	<b>0.03</b>	<b>9</b>	<b>0.38</b>	<b>4</b>	<b>0.16</b>	<b>124</b>	<b>49.87</b>	<b>34</b>	<b>41.99</b>	<b>2</b>	<b>0.32</b>	<b>67</b>	<b>6.82</b>	<b>21</b>	<b>0.74</b>

Հանրապետությունում 2012թ. փետրվարին, 2011թ. փետրվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 35.1%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 9.5 անգամ իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 44.4%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 35.8%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 2.9%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 67.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 50.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	5	4.62	37.1	111.4	96.5	29	28.98	365.0	12000.0	4113.7
Ապարան						2	12.34	86.5	2727.3	684.3
Թալին						9	30.68	93.6	5494.5	580.0
Ծաղկահովիտ						5	30.22	79.5	1000.0	236.3
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ						15	4.27	335.1	10833.3	2585.3
Մասիս	4	5.45	67.2	306.0	136.6	9	6.72	200.0	11904.8	2975.0
Վեդի	6	3.63	72.5	873.5	509.6	45	42.49	207.0	10795.1	1700.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	1	0.41	63.0	63.0	63.0	32	15.75	294.3	9090.0	1545.3
Բաղրամյան						25	52.76	90.6	2561.1	718.3
Վաղարշապատ						26	34.75	444.4	11764.7	2840.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						2	0.73	199.8	1875.0	390.0
Ճամբարակ						1	0.78	60.5	953.3	332.1
Մարտունի								51.1	2850.0	715.2
Սևան						8	4.02	52.2	2134.8	315.3
Վարդենիս						4	10.62	41.2	2575.1	365.5
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						12	6.12	170.4	6424.2	685.2
Գուգարք						4	2.47	234.6	6065.9	772.3
Սպիտակ	1	0.34	685.0	685.0	685.0	6	2.24	250.0	5555.5	725.2
Ստեփանավան	1	0.50	630.0	630.0	630.0	2	2.03	90.6	1686.6	288.2
Տաշիր						43	19.89	45.3	1384.4	136.5
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	6	9.15	42.1	2529.3	667.9	19	5.17	279.3	11942.7	4670.0
Եղվարդ	5	5.49	67.5	1215.5	772.5	18	10.31	174.4	11971.8	2915.0
Հրազդան	1	1.00	390.0	390.0	390.0	10	13.08	130.5	10256.4	1910.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						19	15.52	252.0	1693.1	570.0
Ամասիա								40.9	261.0	128.5
Անի						2	3.16	110.6	546.9	373.2
Աշոգք								58.5	215.8	120.0
Արթիկ						7	5.09	79.4	1428.6	370.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						3	5.75	92.6	1023.2	685.0
Կապան								120.0	841.6	332.4
Մեղրի								193.0	3000.0	720.2
Սիսիան						1	0.20	46.3	1977.4	485.5
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	2	10.00	37.1	51.2	44.2	6	2.22	125.0	10000.0	1865.5
Վայք								58.8	1430.7	600.0

Տավուշի մարզ										
Բերդ						1	0.65	213.3	3783.8	672.5
Իջևան	1	0.40	412.5	412.5	412.5	1	0.34	267.5	9454.5	1225.6
Նոյնմբերյան	1	1.00	361.8	361.8	361.8	8	4.96	46.7	7368.4	831.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատնաքննից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						9	7150.0	130.7	22200.0	2572.6
Ապարան						1	1000.0	124.1	609.6	360.0
Թային						2	4100.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ								60.0	214.3	86.3
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ						4	5470.0	173.9	7140.3	894.0
Մասիս						18	14157.0	187.5	25000.0	1212.8
Վեդի	3	5134.0	44.3	44.3	44.3	11	13350.0	126.1	5000.0	660.5
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						19	21478.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան						1	1030.0	100.0	833.3	234.2
Վաղարշապատ						27	35244.0	197.4	26528.4	1530.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						13	14303.0	186.6	1084.3	650.0
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մարտունի	1	1200.0	219.8	219.8	219.8	20	31321.0	119.3	5000.0	278.8
Սևան						1	4000.0	240.0	3110.4	300.0
Վարդենիս								72.5	987.2	150.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի								114.3	1388.9	215.3
Գուգարք	1	21.0	2201.4	2201.4	2201.4	9	11059.0	77.9	14083.3	1060.0
Սպիտակ						6	6730.0	104.9	1348.3	204.4
Ստեփանավան						2	901.2	88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	1	800.0	4586.5	4586.5	4586.5	19	13049.7	264.5	35353.5	1971.4
Եղվարդ	33	27251.0	638.6	6889.8	1536.8	17	14505.0	173.6	27000.0	2845.0
Հրազդան						7	6770.0	117.7	34848.5	1321.3
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	2	129.6	3913.0	3947.4	3930.2	6	16580.0	113.6	18750.0	331.0
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						1	400.0	67.9	180.6	158.0
Աշոգք								40.8	144.0	63.2
Արթիկ						5	4580.0	111.8	5000.0	216.5



Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	371.6
Կապան	2	1717.0	972.0	1489.5	1230.8	1	700.0	67.9	2638.9	295.5
Մեղրի	1	20000.0	554.4	554.4	554.4			68.5	632.9	190.0
Սիսիան								123.5	875.0	195.0
Վայոց Ձորի մարզ										
Եղնիզաձոր	1	400.0	755.0	755.0	755.0	1	1050.0	96.7	7659.6	498.5
Վայք								120.7	1448.3	198.2
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	110.3
Իջևան	2	2043.0	3000.0	3000.0	3000.0	7	5212.0	74.1	14423.1	520.3
Նոյնեբերդ	1	64.0	1100.0	1100.0	1100.0	1	1050.0	125.0	1948.1	220.0

2012թ. փետրվարին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 1 գործարք 0.39 հա մակերեսով, Արագածոտնի մարզերում:

2012թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 549 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.8%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 79.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2012թ. փետրվարին, 2012թ. հունվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 22.1%-ով, իսկ 2011թ. փետրվարի համեմատ՝ 20.8%-ով:

2012թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 37 բնակարանների, 56 անհատական բնակելի տների, 256 հասարակական, 46 արտադրական նշանակության օբյեկտների, 146 միավոր /243.75 հա/ հողերի և 8 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. փետրվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 52 վարձակալության գործարքների /այդ թվում 3 միավոր՝ 0.83 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2012թ. հունվարի և 2011թ. փետրվարի համեմատ աճել է 13 անգամ: 2012թ. փետրվարին հանրապետությունում վարձակալված 243.75 հա հողերից 1.76 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 241.99 հա հողերից 1.56 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 1.00 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Կոտայքի մարզում՝ 182.76 հա, որից 26.56 հա գյուղատնտեսական նշանակության: 2012թ. փետրվարին հանրապետության մարզերում վարձակալվել են 82.21 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2012թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1637 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.4%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. հունվարի համեմատ, աճել է 3.2 անգամ, իսկ 2011թ. փետրվարի համեմատ նվազել՝ 12.2%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /53.5%/, առանձնատների /22.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.9%/ և հողերի /7.1%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 924 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. հունվարի համեմատ, աճել է 2.9 անգամ, իսկ 2011թ. փետրվարի համեմատ՝ 13.2%-ով:

2012թ. փետրվարին հանրապետությունում գրավադրվել են 146.32 հա հողեր, որից 3.14 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 90.6%-ը կամ 132.51 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.20 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 58.00 հա, որից 57.59 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. փետրվարին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 20 գործարքներ, որից 17-ը՝ Երևանում: 2012թ. հունվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն մնացել է անփոփոխ, ընդ որում Երևանում աճել է 14.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 40.0%-ով: 2011թ. փետրվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 86.5%-ով, ընդ որում Երևանում՝ 85.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 89.3%-ով:

2012թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 509 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2012թ. հունվարի համեմատ նվազել է 64.6%-ով, իսկ 2011թ. փետրվարի համեմատ աճել՝ 81.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 5.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.1%/:

***ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե***